ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 14

«06» դեկտեմբերի 2011թվական
ք. Գյումրի

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ

ՎԱՐՈՒՄ ԷՐ՝ Գյումրու քաղաքային համայնքի ղեկավար ***Վ.Կ.Ղուկասյանը***

ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ ԷՐ՝ Գյումրու քաղաքային համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղար ***Բ.Վ.Ալեքսանովը***

ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԷԻՆ՝ Գյումրու քաղաքային համայնքի ավագանու անդամներ՝

Հ.Պողոսյանը, Գ.Առաքելյանը, Ա.Բաղրամյանը,

Տ.Փանոսյանը, Թ.Համբարձումյանը, Հ.Զարգարյանը,

Վ.Կիրակոսյանը, Մ.Սահակյանը,

ՀՐԱՎԻՐՎԱԾ ԷԻՆ՝

Գ.Մանուկյանը - համայնքի ղեկավարի տեղակալ

Մ.Գրիգորյանը - աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստ

Հովհ.Գրքիկյան - աշխատակազմի բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնի պետ

Ռ.Հակոբջանյանը - աշխատակազմի քաղաքաշինության, շինարարության և անշարժ գույքի կադաստրի բաժնի պետ

Հ.Գասպարյանը - աշխատակազմի ճարտարապետական բաժնի պետ - գլխավոր ճարտարապետ

Ա.Կարապետյանը - աշխատակազմի մշակույթի և երիտասարդության հարցերի բաժնի պետ

Հ.Փափազյան - աշխատակազմի բյուջեի եկամուտների հաշվառման բաժնի պետ

ՕՐԱԿԱՐԳԻ ՆԱԽԱԳԾԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ

1. ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ 2012ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ԵՎ ՄԻՆՉԵՎ 20 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍ ՈՒՆԵՑՈՂ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. Մ.Գրիգորյան)

2. ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔՈՒՄ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ.Հ.Փափազյան)

3. ՃԱՐՏԱՐԱՊԵՏ ՍԱՍՈՒՆ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ.Հ.Գասպարյան)

4. ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՃՈՒՐԴԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ.Ռ.Հակոբջանյան)

5. ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՃՈՒՐԴԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ.Ռ.Հակոբջանյան)

6. «Ղ-ՏԵԼԵԿՈՄ» ՓԲԸ-ԻՆ ԱԼԵՀԱՎԱՔ ԱՇՏԱՐԱԿՆԵՐ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ.Ռ.Հակոբջանյան)

7. ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՀՐԱՊԱՐԱԿԻ N 1 ՀԱՍՑԵԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՇԵՆՔԻ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԹԵՎԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՐԿԻ 294.4ՔԱՌ.Մ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՏԱՐԱԾՔԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ.Ռ.Հակոբջանյան)

8. ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՋԻՎԱՆՈՒ ՓՈՂՈՑԻ N 50 ՀԱՍՑԵԻ ՇԵՆՔԸ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ.Ռ.Հակոբջանյան)

9. «ՄՈՒՇ-2» ԹԱՂԱՄԱՍԻ ԱՆԱՎԱՐՏ ՕԲՅԵԿՏԸ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ.Ռ.Հակոբջանյան)

10. ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 23-Ի «ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՃՈՒՐԴԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ » N 134-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ.Ռ.Հակոբջանյան)

11. ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 31-Ի «ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՃՈՒՐԴԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ » N 81-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ.Ռ.Հակոբջանյան)

12. ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 27-Ի «ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՃՈՒՐԴԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ » N 103-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ.Ռ.Հակոբջանյան)

13. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ.Հ.Գասպարյան)

ՕՐԱԿԱՐԳ ԵՆ ՄՏԵԼ ՀԵՏԵՎՅԱԼ ԹՎՈՎ 4 ԼՐԱՑՈՒՑԻՉ ՀԱՐՑԵՐԸ

14. ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՄԱՆՈՐՅԱ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ.Հ.Գրքիկյան)

15. ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ «ԱԼԼԵԳՐԵՏՏՈ» ԹԻՎ 3 ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ.Ա.Կարապետյան)

16. ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2011ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍՈՒՄ ՏԵՂԱՇԱՐԺ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ.Մ.Գրիգորյան)

17.ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԹՎՈՎ 51 ԱՆՁԱՆՑ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՅՑ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ.Մ.Գրիգորյան)

ՀԱՍՏԱՏՎՈՒՄ Է ՕՐԱԿԱՐԳԸ 17 ՀԱՐՑՈՎ

1. ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ 2012ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ԵՎ ՄԻՆՉԵՎ 20 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍ ՈՒՆԵՑՈՂ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. Մ.Գրիգորյան)

2. ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔՈՒՄ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ.Հ.Փափազյան)

3. ՃԱՐՏԱՐԱՊԵՏ ՍԱՍՈՒՆ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ.Հ.Գասպարյան)

4. ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՃՈՒՐԴԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ.Ռ.Հակոբջանյան)

5. ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՃՈՒՐԴԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ.Ռ.Հակոբջանյան)

6. «Ղ-ՏԵԼԵԿՈՄ» ՓԲԸ-ԻՆ ԱԼԵՀԱՎԱՔ ԱՇՏԱՐԱԿՆԵՐ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ.Ռ.Հակոբջանյան)

7. ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՀՐԱՊԱՐԱԿԻ N 1 ՀԱՍՑԵԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՇԵՆՔԻ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԹԵՎԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՐԿԻ 294.4ՔԱՌ.Մ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՏԱՐԱԾՔԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ.Ռ.Հակոբջանյան)

8. ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՋԻՎԱՆՈՒ ՓՈՂՈՑԻ N 50 ՀԱՍՑԵԻ ՇԵՆՔԸ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ.Ռ.Հակոբջանյան)

9. «ՄՈՒԾ-2» ԹԱՂԱՄԱՍԻ ԱՆԱՎԱՐՏ ՕԲՅԵԿՏԸ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ.Ռ.Հակոբջանյան)

10. ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 23-Ի «ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՃՈՒՐԴԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ » N 134-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ.Ռ.Հակոբջանյան)

11. ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 31-Ի «ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՃՈՒՐԴԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ » N 81-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ.Ռ.Հակոբջանյան)

12. ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 27-Ի «ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՃՈՒՐԴԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ » N 103-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ.Ռ.Հակոբջանյան)

13. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ.Հ.Գասպարյան)

14. ԳՅՈւՄՐՈւ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՄԱՆՈՐՅԱ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ.Հ.Գրքիկյան)

15. ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ «ԱԼԼԵԳՐԵՏՏՈ» ԹԻՎ 3 ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ.Ա.Կարապետյան)

16. ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2011ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍՈՒՄ ՏԵՂԱՇԱՐԺ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ.Մ.Գրիգորյան)

17.ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԹՎՈՎ 51 ԱՆՁԱՆՑ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՅՑ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ.Մ.Գրիգորյան)

Լ Ս Ե Ց Ի Ն՝

1. ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ 2012ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ԵՎ ՄԻՆՉԵՎ 20 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍ ՈՒՆԵՑՈՂ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Մ.Գրիգորյան, Վ.Ղուկասյան

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ, 19-րդ կետերի, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ և 11-րդ հոդվածների և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 49-րդ կետի համաձայն՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Սահմանել Գյումրի քաղաքում տեղական տուրքերի և վճարների 2012թվականի դրույքաչափերը՝ համաձայն N 1 հավելվածի:
2. Սահմանել Գյումրի քաղաքում մինչև 20քառակուսի մետր մակերես ունեցող ժամանակավոր օբյեկտների (ոչ հիմնական շինություններ) համար տրամադրվող հողամասերի վարձավճարները՝ համաձայն N 2 հավելվածի:
3. Ուժը կորցրած ճանաչել Գյումրու քաղաքային համայնքի ավագանու 2010թվականի նոյեմբերի 23-ի «Գյումրու քաղաքային համայնքում 2011թվականի տեղական տուրքերի, վճարների դրույքաչափերը և մինչև 20քառակուսի մետր մակերես ունեցող օբյեկտների վարձավճարները սահմանելու մասին» N 219-Ն որոշումը:

ԿՈՂՄ – միաձայն
ԴԵՄ –

2. ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔՈՒՄ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հ.Փափազյան, Վ.Ղուկասյան

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 19.1) կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի դ) և ե) կետերով, «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ, 14-րդ և 15-րդ հոդվածներով՝

Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Սահմանել Գյումրու քաղաքային համայնքում աղբահանությունը կազմակերպելու համար աղբահանության վճարի 2012 թվականի հետևյալ դրույքաչափերը.

1) կենցաղային աղբի համար բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսական 100 /մեկ հարյուր/ ՀՀ դրամ,

2) ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնարարել աշխատակազմի բյուջեի եկամուտների հաշվառման բաժնի աղբի վարձավճարների գանձման աշխատանքներով զբաղվող աշխատակիցներին՝ կնքելու համապատասխան պայմանագրեր:

3. Ուժը կորցրած ճանաչել Գյումրու ավագանու 2010թվականի նոյեմբերի 23-ի «Գյումրի քաղաքում գործող կազմակերպություններից, ձեռնարկություններից, անհատ ձեռներեցներից, քաղաքում գտնվող առևտրի, սպասարկման տնտեսավարող սուբյեկտներից և ազգաբնակչությունից աղբահանության դիմաց գանձվելիք վարձավճարների 2011թվականի միջին նորմերի հաստատման մասին» N 218 որոշումը:

ԿՈՂՄ – միաձայն
ԴԵՄ –

3. ՃԱՐՏԱՐԱՊԵՏ ՍԱՍՈՒՆ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հ.Գասպարյան, Վ.Ղուկասյան

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ, ի նկատի ունենալով Հայաստանի Ճարտարապետների միության նախագահի 2011թվականի հոկտեմբերի 11-ի N 01/12 գրությունը և հաշվի առնելով Ս. Գրիգորյանի մեծ վաստակը Գյումրի քաղաքի «Կումայրի» արգելոց թանգարանի հուշարձանների վերականգնման գործում՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Ճարտարապետ Սասուն Գրիգորյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակ տեղադրել նրա ապրած տան պատին՝ Գյումրի քաղաքի Ռիժկովի փողոց N 6 շենքի ճակատային հատվածում:
2. Հուշատախտակի պատրաստման և տեղադրման ծախսերը կատարվելու են Հայաստանի Ճարտարապետների միության և Ս. Գրիգորյանի հարազատների միջոցներով:

ԿՈՂՄ – միաձայն
ԴԵՄ –

4. ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՃՈՒՐԴԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ռ.Հակոբջանյան, Վ.Ղուկասյան

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 67-րդ հոդվածի 2-րդ մասով և հիմք ընդունելով Գյումրու քաղաքապետի **2011թվականի նոյեմբերի 17-ի** «Համայնքային սեփականություն հանդիսացող հողերից աճուրդային կարգով օտարելու համար հողամասեր առանձնացնելու մասին» **N 4653-Ա** որոշմամբ առաջարկված հողամասերի մեկնարկային գները՝

Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Հաստատել՝ Գյումրու քաղաքային համայնքի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, առանձնացված հողամասերի աճուրդային կարգով օտարելու նպատակով մեկնարկային գների ցուցակը՝ համաձայն հավելվածի:

ԿՈՂՄ – միաձայն
ԴԵՄ –

5. ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՃՈՒՐԴԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ռ.Հակոբջանյան, Վ.Ղուկասյան

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 67-րդ հոդվածի 2-րդ մասով և հիմք ընդունելով Գյումրու քաղաքապետի **2011թվականի դեկտեմբերի 06-ի** «Համայնքային սեփականություն հանդիսացող հողերից աճուրդային կարգով օտարելու համար հողամասեր առանձնացնելու մասին» **N 4907-Ա** որոշմամբ առաջարկված հողամասերի մեկնարկային գները՝

Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Հաստատել՝ Գյումրու քաղաքային համայնքի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, առանձնացված հողամասերի աճուրդային կարգով օտարելու նպատակով մեկնարկային գների ցուցակը՝ համաձայն հավելվածի:

ԿՈՂՄ – միաձայն
ԴԵՄ –

6. «Ղ-ՏԵԼԵԿՈՄ» ՓԲԸ-ԻՆ ԱԼԵՀԱՎԱՔ ԱՇՏԱՐԱԿՆԵՐ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ռ.Հակոբջանյան, Վ.Ղուկասյան

«Ղ-Տելեկոմ» ՓԲԸ-ն դիմել է Գյումրու քաղաքապետարան՝ ալեհավաք աշտարակ կայանների տեղադրման համար:

Գյումրու ավագանին և քաղաքապետարանը կարևորում են բջջային կապի զարգացման համար ընկերության ծրագրերը:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 66-րդ հոդվածի 2-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թվականի ապրիլի 12-ի «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին» N 286 որոշմամբ հաստատված կարգի 20-րդ կետի ա) ենթակետով՝

Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Թույլատրել «Ղ-Տելեկոմ» ՓԲԸ-ին ուղղակի վաճառքի միջոցով օտարել Սարուխանյան փողոց N 6/5 հասցեի 128.0քմ մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը (սեփականության վկայական 2887803):
2. Սարուխանյան փողոց N 6/5 հասցեի 128.0քմ մակերեսով հողամասի համար օտարման գին սահմանել 400 000 (չորս հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Հողամասերի առուվաճառքի հետ կապված ծախսերը կատարել «Ղ-Տելեկոմ» ՓԲԸ-ի հաշվին:

ԿՈՂՄ – միաձայն
ԴԵՄ –

7. ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՀՐԱՊԱՐԱԿԻ N 1 ՀԱՍՑԵԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՇԵՆՔԻ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԹԵՎԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՐԿԻ 294.4ՔԱՌ.Մ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՏԱՐԱԾՔԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ռ.Հակոբջանյան, Վ.Ղուկասյան

«Հայէկոնոմբանկ» բաց բաժնետիրական ընկերությունը դիմել է Գյումրու քաղաքապետին Վարդանանց հրապարակի N 1 հասցեի քաղաքապետարանի շենքի հարավային թևի առաջին հարկի 294.4քառ.մ մակերեսով հատվածը ժամանակավոր օգտագործելու նպատակով վարձակալությամբ ընկերությանը տրամադրելու խնդրանքով:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական օրենսգրքի» 613-րդ հոդվածով և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով՝

Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Գյումրի քաղաքի Վարդանանց հրապարակի N 1 հասցեի քաղաքապետարանի շենքի հարավային թևի առաջին հարկի 294.4քառ.մ մակերեսով տարածքը երկու տարի ժամկետով օգտագործման տրամադրել «Հայէկոնոմբանկ» բաց բաժնետիրական ընկերությանը:

2. 294.4քառ.մ մակերեսով տարածքի օգտագործման համար վարձավճար սահմանել երկու տարվա համար 21 000 000 (քսանմեկ միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամ, որից 18 000 000 (տասնութ միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամ արժողությամբ վարձավճարի դիմաց շենքում կատարել անավարտ շինարարական աշխատանքների անբաժանելի բարելավումներ:
3. Վարձակալած տարածքի պահպանմանը, օգտագործմանը և անբաժանելի բարելավումների կատարմանը ներկայացվող լրացուցիչ պահանջները մանրամասնել վարձակալության պայմանագրում:

ԿՈՂՄ – միաձայն
ԴԵՄ –

8. ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՋԻՎԱՆՈՒ ՓՈՂՈՑԻ N 50 ՀԱՍՑԵԻ ՇԵՆՔԸ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ռ.Հակոբջանյան, Վ.Ղուկասյան

Գյումրու համայնքի սեփականություն հանդիսացող Ջիվանու փողոցի N 50 հասցեի շենքը մինչև երկրաշարժը հանդիսացել է Բագրատ Ղարիբջանյանի տուն-թանգարան: 1988թվականի երկրաշարժից շենքը վնասվել է և հետերկրաշարժյան տարիներին մնալով անօգտագործելի, բնակլիմայական երկարատև ազդեցություններից դարձել է խիստ վթարային և տեղական նշանակության պատմության և մշակույթի անշարժ հուշարձանի պահպանությունն ապահովելու համար անհրաժեշտ է կատարել ամրակայման և վերականգնման մեծածավալ աշխատանքներ, որի հնարավորությունը տեղական բյուջեն չունի:

Ղարիբջանյանների ընտանիքը հանդես է եկել շինությունն իր միջոցներով վերականգնելու և տուն-թանգարանը վերաբացելու առաջարկությամբ:

Համաձայն Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական օրենսգրքի» 605-րդ հոդվածի և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի՝

Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Գյումրու համայնքի սեփականություն հանդիսացող Ջիվանու փողոցի N 50 հասցեի շենքը նվիրաբերել Բագրատ Ղարիբջանյանի ընտանիքին, սահմանված կարգով շենքը ամրակայելու, վերականգնելու և տուն-թանգարանը վերաբացելու նպատակով:
2. Նվիրաբերություն ստացողը, նվիրաբերած գույքն առանց նվիրաբերողի համաձայնության այլ նպատակով օգտագործելու կամ սահմանված նշանակությունը փոփոխելու դեպքում, նվիրաբերողը իրավունք ունի պահանջելու նվիրաբերության վերացում:
3. Ջիվանու փողոցի N 50 հասցեի շենքի, որպես պատմության և մշակույթի հուշարձանի, ամրակայման և վերականգնմանը ներկայացվող պահանջները մանրամասնել նվիրաբերության պայմանագրում:

ԿՈՂՄ – միաձայն
ԴԵՄ –

9. «ՄՈՒՇ-2» ԹԱՂԱՄԱՍԻ ԱՆԱՎԱՐՏ ՕԲՅԵԿՏԸ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ռ.Հակոբջանյան, Վ.Ղուկասյան

Գյումրու քաղաքապետարան է դիմել «Վերածնունդ» մարզաառողջարարական կենտրոն» հասարակական կազմակերպությունը «Մուշ-2» թաղամասում իր միջոցների հաշվին մասնագիտացված սուսերամարտի բազմապրոֆիլ դպրոցի ստեղծման համար անհրաժեշտ օբյեկտի շինարարության ծրագրի իրականացման առաջարկով:

Գյումրու քաղաքապետարանը և ավագանին կարևորում են նորակառույց «Մուշ-2» թաղամասում մարզական կազմակերպությունների ստեղծման անհրաժեշտությունը:

Նպատակ ունենալով խրախուսել և աջակցել ոչ պետական ներդրումների ներգրավումը «Մուշ-2» թաղամասի հասարակական-կենցաղային օբյեկտների ստեղծման գործում և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ և 89-րդ հոդվածներով և «Քաղաքացիական օրենսգրքի» 605-րդ հոդվածով՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Համաձայնություն տալ «Մուշ-2» թաղամասի N 7/12 հասցեագրությամբ 506.16քառ.մ հողամասով և 333.67քառ.մ գույքով (վկայական 2641049) «Մուշ-2» թաղամասի N 7/13 հասցեագրությամբ 433.2քառ.մ հողամասով 185.87քառ.մ գույքով (վկայական 2641048) օբյեկտները «Վերածնունդ» մարզաառողջարարական կենտրոն» հասարակական կազմակերպությանը նվիրաբերելուն: Նվիրաբերումը կատարվում է սպորտային-կրթական օբյեկտ կառուցելու և այն բացառապես այդ նպատակով օգտագործելու պայմանով:
2. Նվիրաբերման նոտարական վավերացման և իրավունքների պետական գրանցման հետ կապված ծախսերը կատարում է Հասարակական կազմակերպությունը:
3. «Վերածնունդ» մարզաառողջարարական կենտրոն» հասարակական կազմակերպությունը պարտավոր է.
   1) Սույն որոշման ընդունման օրվանից երկու ամսվա ընթացքում իրավունքներն ենթարկել պետական գրանցման:
   2) Իրավունքների պետական գրանցման վկայականի տրամադրման օրվանից երկու ամսվա ընթացքում ձեռք բերել ճարտարապետահատակագծային առաջադրանք:
   3) Ճարտարապետահատակագծային առաջադրանքը տրամադրելու օրվանից վեց ամսյա ժամկետում Գյումրու քաղաքապետարանի համաձայնեցմանը ներկայացնել օբյեկտի նախագիծը Հայաստանի Հանրապետության կառավարության 2009թվականի հունիսի 26-ի «Քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտների տարածքներում քաղաքաշինական գործունեության իրականացման կարգը հաստատելու մասին» N 792-Ն որոշման պահանջների համապատասխան:
   4) Ձեռք բերել շինարարության թույլտվություն մինչև 2012թվականի օգոստոսի 1-ը: Օբյեկտի շինարարական աշխատանքներն ավարտել մինչև 2015թվականի դեկտեմբեր ամիսը, և սահմանված կարգով ավարտը ներկայացնել փաստագրման:
4. «Վերածնունդ» մարզաառողջարարական կենտրոն» հասարակական կազմակերպությունը պարտավոր է սույն որոշմամբ սահմանված ժամկետում պարտավորությունների կատարման մասին գրավոր տեղեկացնել Գյումրու քաղաքապետարանին ոչ ուշ, քան մեկ շաբաթվա ընթացքում՝ որոշման մեջ նշված ժամկետը լրանալուց: Սույն կետում նշված պարտավորությունը պետք է իրականացվի «Քաղաքացիական օրենսգրքի» 605-րդ հոդվածի 4-րդ կետի համապատասխան:
5. «Վերածնունդ» մարզաառողջարարական կենտրոն» հասարակական կազմակերպությունը պարտավոր է 2012թվականի հուլիսին ներկայացնել տեղեկատվություն և պաշտոնական փաստաթղթեր շինարարության համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայության վերաբերյալ:
6. Սույն որոշման 3-րդ, 5-րդ և 6-րդ կետերի պարտավորությունները չկատարելու դեպքում ավագանին իրավունք ունի միակողմանի ուժը կորցրած ճանաչել սույն որոշումն ամբողջությամբ և միակողմանի լուծել պայմանագիրը: Գույքը վերադարձվում է համայնքին անհատույց, այդ թվում առկա՝ կազմակերպության ֆինանսավորմամբ ստեղծված անավարտ կառույցների մասով: Սույն կետի առաջին պարբերությունը չի կիրառվում, եթե հասարակական կազմակերպությունը վճարում է նվիրաբերված գույքի արժեքն ըստ համապատասխան կարգով կատարված գնահատման փաստաթղթի:
7. Սույն որոշումը հանդիսանում է նվիրաբերման պայմանագրի անբաժանելի մասը:

ԿՈՂՄ – միաձայն
ԴԵՄ –

10. ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 23-Ի «ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՃՈՒՐԴԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ » N 134-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ռ.Հակոբջանյան, Վ.Ղուկասյան

Գյումրու քաղաքային համայնքի ավագանու **2011թ. սեպտեմբերի 23-ի** «Աճուրդով օտարելու նպատակով համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը առանձնացնելու և աճուրդի մեկնարկային գներ հաստատելու մասին» **N 134-Ա** որոշմամբ հաստատված ցուցակի 13-րդ տողով հաստատվել է **Շարա Տալյան փողոցի N 11/7** հասցեի **360.0**քառ.մ առանձնացված հողամասի մեկնարկային գինը՝ **1 250 000 (մեկ միլիոն երկու հարյուր հիսուն հազար)** ՀՀ դրամ:

Հողամասի աճուրդով օտարման հայտարարությունը տրվել է մեկ անգամ և հայտ չներկայացնելու պատճառով չի կայացել (**2011թվականի դեկտեմբերի 5-ի N 77 արձանագրություն):**

Ընդունելով աճուրդային հանձնաժողովի **2011թ. դեկտեմբերի 5–ի N 77/1** արձանագրությամբ ներկայացված առաջարկությունը, համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 69-րդ հոդվածի 1-ին կետի, 68-րդ հոդվածի 7-րդ կետի 2-րդ պարբերության, «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ կետի և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին կետի՝

Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Գյումրու քաղաքային համայնքի ավագանու 2011թվականի սեպտեմբերի 23-ի «Աճուրդով օտարելու նպատակով համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը առանձնացնելու և աճուրդի մեկնարկային գներ հաստատելու մասին» N 134-Ա որոշմամբ հաստատված ցուցակի 13-րդ կետն ամբողջությամբ շարադրել հետևյալ խմբագրությամբ.

13	Շարա Տալյան փող. 11/7 9-րդ գոտի	ԱՀ11-0155 360.0	բնակավայրերի բնակելի կառուցապատում	անհատական բնակելի տան կառուցում	1 125 000 մեկ միլիոն հարյուր քսանհինգ հազար

ԿՈՂՄ – միաձայն
ԴԵՄ –

11. ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 31-Ի «ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՃՈՒՐԴԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ » N 81-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ռ.Հակոբջանյան, Վ.Ղուկասյան

Գյումրու քաղաքային համայնքի ավագանու **2011թվականի մայիսի 31-ի** «Աճուրդով օտարելու նպատակով համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը առանձնացնելու և աճուրդի մեկնարկային գներ հաստատելու մասին» **N 81-Ա** որոշմամբ հաստատված ցուցակի 3-րդ տողով հաստատվել է **Իսահակյան փողոցի N 23/2** հասցեի **656.0**քառ.մ առանձնացված հողամասի մեկնարկային գինը՝ **2 100 000 (երկու միլիոն մեկ հարյուր հազար)** ՀՀ դրամ:

Հողամասի աճուրդով օտարման հայտարարությունը տրվել է մեկ անգամ և հայտ չներկայացնելու պատճառով չի կայացել (**2011թվականի դեկտեմբերի 5-ի N 77 արձանագրություն):**

Ընդունելով աճուրդային հանձնաժողովի **2011թվականի դեկտեմբերի 5–ի N 77/1** արձանագրությամբ ներկայացված առաջարկությունը, համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 69-րդ հոդվածի 1-ին կետի, 68-րդ հոդվածի 7-րդ կետի 2-րդ պարբերության, «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ կետի և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին կետի՝

Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Գյումրու քաղաքային համայնքի ավագանու 2011թվականի մայիսի 31-ի «Աճուրդով օտարելու նպատակով համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը առանձնացնելու և աճուրդի մեկնարկային գներ հաստատելու մասին» N 81-Ա որոշմամբ հաստատված ցուցակի 3-րդ կետն ամբողջությամբ շարադրել հետևյալ խմբագրությամբ.

3	Իսահակյան փող. 23/2 9-րդ գոտի	ԱՀ11-0098 656.0	բնակավայրերի խառը կառուցապատում	անհատական բնակելի տան կառուցում	1 890 000 մեկ միլիոն ութ հարյուր իննսուն հազար

ԿՈՂՄ – միաձայն
ԴԵՄ –

12. ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 27-Ի «ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՃՈՒՐԴԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ » N 103-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ռ.Հակոբջանյան, Վ.Ղուկասյան

Գյումրու քաղաքային համայնքի ավագանու **2011թվականի հունիսի 27-ի** «Աճուրդով օտարելու նպատակով համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը առանձնացնելու և աճուրդի մեկնարկային գներ հաստատելու մասին» **N 103-Ա** որոշմամբ հաստատված ցուցակի 21-րդ տողով հաստատվել է **Ախուրյանի խճուղի N 7/4** հասցեի **3827.78**քառ.մ առանձնացված հողամասի մեկնարկային գինը՝ **6 700 000 (վեց միլիոն յոթ հարյուր հազար)** ՀՀ դրամ:

Հողամասի աճուրդով օտարման հայտարարությունը տրվել է մեկ անգամ և հայտ չներկայացնելու պատճառով չի կայացել (**2011թվականի դեկտեմբերի 5-ի N 77 արձանագրություն**):

Ընդունելով աճուրդային հանձնաժողովի **2011թվականի դեկտեմբերի 5–ի N 77/1** արձանագրությամբ ներկայացված առաջարկությունը, համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 69-րդ հոդվածի 1-ին կետի, 68-րդ հոդվածի 7-րդ կետի 2-րդ պարբերության, «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ կետի և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին կետի՝

Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Գյումրու քաղաքային համայնքի ավագանու 2011թվականի հունիսի 27-ի «Աճուրդով օտարելու նպատակով համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը առանձնացնելու և աճուրդի մեկնարկային գներ հաստատելու մասին» N 103-Ա որոշմամբ հաստատված ցուցակի 21-րդ կետն ամբողջությամբ շարադրել հետևյալ խմբագրությամբ.

21	Ախուրյանի խճ. 7/4 11-րդ գոտի	ԱՀ11-0133 3827.78	արդյունաբերության արտադրական և պահեստարաններ	արտադրական և պահեստային շինությունների կառուցում	6 000 000 վեց միլիոն

ԿՈՂՄ – միաձայն
ԴԵՄ –

13. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հ.Գասպարյան, Վ.Ղուկասյան

Գյումրու համայնքը Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական օրենսգրքի» 188-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Պետական կամ համայնքային հողամասերում գտնվող ինքնակամ կառույցների նկատմամբ պետության կամ համայնքների սեփականության իրավունքի պետական գրանցման կարգը հաստատելու մասին» N 731-Ն որոշմամբ սահմանված կարգով ներքոհիշյալ շինությունների նկատմամբ ձեռք է բերել սեփականության իրավունք, որոնք ենթարկվել են պետական գրանցման:

Նկատի ունենալով, որ նշված շինությունների նկատմամբ պետք է կիրառվեն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» N 912-Ն որոշման պահանջները՝ շինությունները ուղղակի վաճառքի միջոցով օտարվելու են տվյալ շինությունները կառուցողներին՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Թույլատրել ուղղակի վաճառքի միջոցով օտարել համայնքային սեփականություն հանդիսացող շինությունները /հողամասերը/ տվյալ շինությունները կառուցողներին՝ ցուցակը համաձայն հավելվածի:
2. Շինությունների և հողամասերի օտարման գները սահմանել համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» N 912-Ն որոշմամբ սահմանված գների:

ԿՈՂՄ – միաձայն
ԴԵՄ –

14. ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՄԱՆՈՐՅԱ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Մ.Գրիգորյան, Վ.Ղուկասյան

Գյումրու քաղաքապետարանի կարիքների համար ամանորյա միջոցառումների կազմակերպման նպատակով, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ, 5-րդ կետերով, և 54-րդ հոդվածով `

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Գյումրու համայնքի 2011թվականի բյուջեի վարչական մասով նշված միջոցառումների և ապրանքների համար նախատեսված գումարից հատկացնել **1 900 000 /մեկ միլիոն ինը հարյուր հազար/** Հայաստանի Հանրապետության դրամ:

ԿՈՂՄ – միաձայն
ԴԵՄ –

15. ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ «ԱԼԼԵԳՐԵՏՏՈ» ԹԻՎ 3 ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ա.Կարապետյան, Վ.Ղուկասյան

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 15-րդ մասով՝

Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Համաձայնություն տալ՝ Գյումրու քաղաքապետարանի «Ալլեգրետտո» թիվ 3 երաժշտական դպրոցի գործադիր տնօրեն նշանակելու **Վահրամ Լևոնի Թադևոսյանին:**

ԿՈՂՄ – միաձայն
ԴԵՄ –

16. ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2011ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍՈՒՄ ՏԵՂԱՇԱՐԺ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Մ.Գրիգորյան, Վ.Ղուկասյան

Հաշվի առնելով լրացուցիչ կատարվող ծախսերի և բյուջեում կատարվող տեղաշարժերի անհրաժեշտությունը և ղեկավարվելով «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ կետով՝

Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Գյումրու քաղաքային համայնքի 2011թվականի բյուջեի ծախսային մասում կատարել տեղաշարժ՝ 1-1-1 գործառնական դասակարգման 4131 հոդվածից՝ 10230.0 հազ.դրամ, 8-1-1գործառնական դասակարգման 4511 հոդվածից՝ 8000.0 հազ.դրամ, 9-1-1 գործառնական դասակարգման 4511 հոդվածին 18230.0 հազ.դրամ:

ԿՈՂՄ – միաձայն
ԴԵՄ –

17.ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԹՎՈՎ 51 ԱՆՁԱՆՑ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՅՑ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Մ.Գրիգորյան, Վ.Ղուկասյան

Գյումրու քաղաքապետին են դիմել սոցիալապես անապահով՝ թվով 51 անձիք դրամական օգնություն ստանալու խնդրանքով:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետով և հիմք ընդունելով դիմումները՝

Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Թվով 51 անձանց՝ ցուցակը համաձայն հավելվածի, Գյումրու քաղաքապետարանի բյուջեի այլ ծախսերից կանխիկ հատկացնել ընդամենը **1080000 /մեկ միլիոն ութսուն հազար/ դրամ:**

ԿՈՂՄ – միաձայն
ԴԵՄ –